



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆՄՈՒՇՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԵՏ  
ԿԱՊՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով** «Փաստաբանության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ կետի, ինչպես նաև  
«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ  
հոդվածի 5-րդ մասի և 87-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով,

**եյնելով** Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի  
նախագահի կողմից փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ  
հարուցելու հարցը քննարկելու լիազորությունն իրականացնելիս՝  
հայտնաբերված փաստաբանների և նրանց վստահորդների միջև կնքված  
իրավաբանական օգնություն ցույց տալու մասին պայմանագրերի հետ կապված  
խնդիրները լուծելու անհրաժեշտությունից,

**նկատի ունենալով** քաղաքացիական և վարչական գործերով դատական  
ներկայացուցչություն իրականացնելու ծավալները, հետևաբար և այդ գործերով  
դատական ներկայացուցչությանն առնչվող իրավաբանական օգնություն ցույց  
տալու պայմանագրի նմուշ հաստատելու անհրաժեշտությունը,

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

**1. Իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագրի հետ  
կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի  
վերաբերյալ տալ ոչ պաշտոնական պարզաբանում՝ համաձայն թիվ  
1 հավելվածի:**

**2. Հաստատել «Իրավաբանական օգնություն ցույց տալու  
հանձնարարության վերաբերյալ» (դատական ներկայացուցչության համար)  
պայմանագրի նմուշը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:**

**3. Սահմանել, որ սույն որոշմամբ հաստատված պայմանագրի նմուշը և  
ոչ պաշտոնական պարզաբանումները կրում են խորհրդարարական բնույթ և  
պարտադիր չեն փաստաբանների համար:**

**4. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշումը և հաստատված հավելվածները ուղարկել բոլոր փաստաբաններին, ինչպես նաև ապահովել դրանց հրապարակումը ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում:**

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

04 ապրիլի 2017թ.  
թիվ 85-L  
ք. Երևան